**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**«28» փետրվարի 2020 թ-ին կնքված N «ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/1-1»**
**Պետության կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

ք. Երևան «27» հունվարի 2021թ.

Վարչապետի աշխատակազմը, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ (թիվ 00229/20 լիազորագիր, տրված 07.12.2020թ-ին) Կարեն Ասատուրյանի (նույնականացման քարտ 000509638, տրված 11.02.2013թ. 004-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), որը գործում է Կանոնադրության հիման վրա, բոլորը միասին՝ կողմեր հիմք ընդունելով «ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2021թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունները և վճարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2021թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրն հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024065<br>ՀՎՀՀ 02505554 | «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ<br>ք. Երևան, Ազատության պողոտա 24/1<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 163004038879<br>ՀՎՀՀ 02500052 | Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին,<br>ք. Երևան, Կոմիտասի 49/2<br>ՀՎՀՀ 00454227 |
| ---------------------------<br>*(ստորագրություն)*<br>Կ.Տ. | ---------------------------<br>*(ստորագրություն)*<br>Կ.Տ. | ---------------------------<br>*(ստորագրություն)*<br>Կ.Տ. |

Հավելված N 1
«28» փետրվարի 2020թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/1-1 ծածկագրով պայմանագրի
«27» հունվարի 2021թ. կնքված N 2 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211100/3 | հանրային հեռախոսային ծառայություններ | 70 000 | 70 000 | 70 000 | 157 500 | 157 500 | 157 500 | 245 000 | 245 000 | 245 000 | 350 000 | 350 000 | 350 000 | **350 000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024065
ՀՎՀՀ 02505554

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության պողոտա 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ 02500052

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին,
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՎՀՀ 00454227

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.